

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի  
մայիսի 22-ին կայացած Գիտական Խորհրդի նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 29-ը (ցուցակը կցվում է)

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

**Օրակարգ**

1. 2017/2018 ուստարվա ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում /զեկ. փոխդեկան Ա.Թ.Գրիգորյան/
2. «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի վարիչի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ. ամբ. վարիչ Պ.Գ.Դավթյան/
3. «Ռեզիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների» և «Օգտակար հանածոների որոնման և հետախուզման» ամբիոնների միավորման հարցի քննարկում /զեկ. ՕՀՀ որոնման և հետախուզման ամբ. վարիչ Ռ.Ս.Մովսեսյան/

**4. Ընթացիկ հարցեր**

1. **ՀՄԵՅԻՆ. Ա.Գրիգորյանի** հաղորդումը ֆակուլտետում 2017/2018 ուստարվա ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքի վերաբերյալ: Ա.Գրիգորյանը նշեց, որ կազմվել են ուսումնական պրակտիկաների բոլոր երթուղիների գրաֆիկները: Ներկայացրեց նաև նախորդ տարվա գրաֆիկները և փաստեց, որ այս տարի բավականին կրճատվել են հատկապես փոխադրամիջոցներով իրականացվող երթուղիները՝ ելնելով ֆինանսական դժվարություններից: Իր խոսքում Գրիգորյանն ասաց, որ ավելացվել են մերձերևանյան տարածքում երթուղիների քանակը: Խոսեց նաև արտադրական պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ: Պրակտիկաներն անցկացնելու

համար համապատասխան արտադրական ձեռնակություններին և ծառայություններին ամբիոնների կողմից առաջարկվել է կնքել պայմանագիր՝ արտադրական պրակտիկաները նշված ձեռնարկություններում կազմակերպելու նպատակով: -Այս պահին պայմանագրերի կնքման գործընթացը շարունակվում է: Համոզված ենք, որ մինչև հունիսի 20 բոլոր պայմանագրերը կնքված կլինեն պրակտիկաների անցկացման համար,-ասաց Ա.Գրիգորյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն:

**2. ԼՍԵՑԻՆ.** «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի վարիչ Պ.Գ.Դավթյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ: Պ.Դավթյանը մանրամասնորեն ներկայացրեց ամբիոնում կատարված աշխատանքները, առկա հաստիքային ռեսուրսները, բակալավրիատում և մագիստրատուրայում սպասարկման ուղղությունները: Ներկայացրեց նաև մշակված և լրամշակված կրթական ծրագրերի մասին: Իր խոսքում Պ.Դավթյանը խոսեց նաև ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքների և հրատարակված գիտական աշխատանքների վերաբերյալ: Նշեց ամբիոնում կահավորված լաբորատորիաների և համակարգչային սենյակների առկայությունը: Բարձրաձայնեց մասնագիտության կարևորությունը և շեշտադրեց դասավանդման որակի վերահսկման իրականացումը: /Հաշվետվությունը կցվում է/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

*դոց.Ս.Ռ.Մուվարյանը, պրոֆ.Թ.Գ.Վարդանյանը, դեկան Ս.Ա.Գրիգորյանը,* ովքեր նշեցին այն դրական աշխատանքը, որ կատարվել է ամբիոնում հաշվետու ժամանակաշրջանում:

**ԱՌԱՋԱՐԿՎԵՑ.** «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի վարիչ Պ.Գ.Դավթյանի կատարած աշխ գնահատել բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

**3. ԼՍԵՑԻՆ.** ՕՀՀ որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ Ռ.Ս.Մովսեսյանի հաղորդումը «Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների» և

«Օգտակար հանածոների որոնման և հետախուզման» ամբիոնների միավորման հարցի վերաբերյալ:

#### **4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ**

**4.1 ԼՍԵՑԻՆ.** Մեթոդ.խորհրդի նախագահ Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը «Սերվիսի» ամբիոնի դասախոս Հասմիկ Սայադյանի «Տուրօպերատորական և տուրգործակալական գործունեության տեխնոլոգիաները և կազմակերպումը» ուսումնամեթոդական ձեռնարկը և «Երկրաֆիզիկայի» ամբիոնի ասիստենտ Լյուբա Միրզոյանի «Ծանրության ուժի անոմալիաների մեկնաբանման եղանակները» գրավի հետախուզության դասընթացից մեթոդական ցուցումները տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Երաշխավորել «Սերվիսի» ամբիոնի դասախոս Հասմիկ Սայադյանի «Տուրօպերատորական և տուրգործակալական գործունեության տեխնոլոգիաները և կազմակերպումը» ուսումնամեթոդական ձեռնարկը և «Երկրաֆիզիկայի» ամբիոնի ասիստենտ Լյուբա Միրզոյանի «Ծանրության ուժի անոմալիաների մեկնաբանման եղանակները» գրավի հետախուզության դասընթացից մեթոդական ցուցումների տպագրման և հրատարակման ներկայացնելու համար:

**4.2 ԼՍԵՑԻՆ.** Մեթոդ.խորհրդի նախագահ Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը ԵՊՀ 100 ամյակին նվիրված Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում կազմակերպվող միջազգային գիտական կոնֆերանսի կազմակերպման ընթացքի վերաբերյալ: Թ.Վարդանյանը նշեց, որ ներկայացվել են բավականին մեծ թվով հոդվածների հայտեր թե՛ ՀՀ-ից և թե՛ արտերկրից, որոնք կդասակարգվեն ըստ համապատասխան ոլորտների և հերթական տեղեկատվական նամակի միջոցով կտեղեկացվեն հայտատուներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Ընդունել ի գիտություն

**4.3 ԼՍԵՑԻՆ.** Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ Գ.Վ.Մարկոսյանի հաղորդումը 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Սամվել Մանուկի Դեմիրճյանի** ատեստավորման

հարցի վերաբերյալ: Գ.Մարկոսյանը նշեց, որ ամբիոնում քննարկվել է ասպիրանտի հաշվետվությունը և ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը, ինչի արդյունքում ամբիոնը միջնորդում է ֆակուլտետի գիտ.խորհրդին հասատտելու ամբիոնի որոշումը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված կատարած աշխատանքները և ամբիոնի կողմից արված միջնորդությունը՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի ամբիոնի 2-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Սամվել Սանուկի Դեմիրճյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**4.4 ԼՍԵՑԻՆ.** Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Հ.Պոտոսյանի հաղորդումը առկա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ **Վահան Ակսելի Պոտոսյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ: Ա.Պոտոսյանը նշեց, որ ամբիոնում քննարկվել է ասպիրանտի հաշվետվությունը և ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը, ինչի արդյունքում ամբիոնը միջնորդում է ֆակուլտետի գիտ.խորհրդին հասատտելու ամբիոնի որոշումը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված կատարած աշխատանքները և ամբիոնի կողմից արված միջնորդությունը՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի առկա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ **Վահան Ակսելի Պոտոսյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**4.5 ԼՍԵՑԻՆ.** ՕՀՀ որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ Ռ.Ս.Մովսեսյանի հաղորդումը առկա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ **Արման Լևոնի Գյուրջյանի** ատեստավորման հարցի վերաբերյալ: Ռ.Մովսեսյանը նշեց, որ ամբիոնում քննարկվել է ասպիրանտի հաշվետվությունը և ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը, ինչի արդյունքում ամբիոնը միջնորդում է ֆակուլտետի գիտ.խորհրդին հասատտելու ամբիոնի որոշումը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված կատարած աշխատանքները և ամբիոնի կողմից արված միջնորդությունը՝ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՕՀՀ որոնման և հետախուզման ամբիոնի առկա ուսուցման 2-րդ տարվա ասպիրանտ **Արման Լևոնի Գյուրջյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

**Խորհրդի նախագահ**

**Մ.Ա.Գրիգորյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**